## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 7 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

● Կիր. 14 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Սեղանին վրայ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Գեղամ Վրդ. Զաքարեան։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց Սարկաւագական ձեռնադրութիւն (Տես էջ 256)։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Խաղողօրհնէք»ի արարողութիւն, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի։

● Բշ. 15 Օգոստ. — Այսօր սկսան Ս. Կոյսի Վերափոխման տօնը կանխող երկու շաբաթներու ամենօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագները՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։

● Կիր. 21 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան։ Քարոզեց Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեան, մեկնաբանելով օրուան ճաշու Աւետարանին ընթերցուածը — անդամալոյծին բժշկութեան դրուագը։

● Ուր. 26 Օգոստ. — Վաղուան նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեան։

● Շբ. 27 Օգոստ. — Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան։

— Կէսօրէ վերջ ժամը 4ին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանդէս նախատօնակը։

— Գիշերահսկումին, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան «Ննջեցէք»ի և Հսկման արարողութիւններ, ինչպէս նաև առաւօտեան ժամերգութիւն։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Ասողիկ Եպս.։ Ուշ գիշերին, Միաբանութիւն ու ներկայ հաւատացեալներ վերադարձան Մայրավանք։

● Կիր. 28 Օգոստ. — ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ: Առաւօտուն, Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթսեմանիի ձորը, ուր յունաց հանդիսաւոր Ս. Պատարագէն ետք, ժամը 10ին, «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և «Օրհնեալ ես դու ի կանայս» բնաբանով քարոզեց Գերշ. Տ. Ասողիկ Եպս., և Ս. Պատարագէն ետք նախագահեց Սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին։

— Կէսօրէ վերջ ևս Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», որուն յաջորդեցին երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ. բոլորն ալ Գերշ. Տ. Ասողիկ Սրբազանի նախագահութեամբ։

● Բշ. 29 Օգոստ. Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Արիս Վրդ. Շիրվանեան։ Ապա, Գերշ. Տ. Հայկազուն Եպս.ի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր՝

ա) Մայր Տաճարին մէջ,
բ) Գաւիթը՝ Տ. Կիւրեղ Պատր.ի շիրմին վրայ,
գ) Հին կրօնական աւագ. գերեզմանատան մէջ,
դ) Զամ-Թաղի » » »։

### ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ԱՆՈՒԱՆ

Գահակալութեան յաջորդ օրը, Բշ. 22 Օգոստ., հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Պատարագիչն էր Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան, որ «Եւս առաւել»էն առաջ խօսեցաւ քարոզ մը, ներկայացնելով կեանքն ու գործը Ս. Աթոռոյս Նորընտիր Գահակալին, բարեմաղթութիւններ ընելով անոր կենաց արևշատութեան համար։ Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունք՝ Ս. Աթոռոյս Երանաշնորհ Պատրիարք Ամեն. Տ. Կիւրեղ Բ.ի, որմէ ետք, Պատարագիչ Սրբազանն ու այս Սարկաւագները առաջին անգամ ըլլալով յիշատակեցին անունը Ն. Ամեն. Տ. Եղիշէ Բ. Սրբազան Պատրիարքին։ Ս. Պատարագէն ետք նաև կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ Տաճարի գաւիթին մէջ, Երանաշնորհ Պատրիարքի շիրմին վրայ։ Հանգստեան զոյգ պաշտամունքներուն նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Բշ. 15 Օգոստ. — Ճարտարապետ Տիար Եդ. Իւթիւճեան, որ Ս. Քաղաք ժամանած էր զբաղելու համար յատկապէս Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան գործով, վերադարձաւ Փարիզ։

● Շբ. 20 Օգոստ. — Ս. Պատրիարք Հօր Գահակալութեան հանդիսութեանց առիթով, Անթիլիասէն Ս. Աթոռ ժամանեց Կիլիկեան Կաթողիկոսութեան պատգամաւորութիւնը, գլխաւորութեամբ

digitised by A.R.A.R.@

Լիբանանահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Խորէն Արքեպս. Բարոյեանի, իրեն կ'ընկերանային Հոգշ. Տ. Վարդան Վրդ. Տէմիրճեան, Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բախտիկեան, Տիար Միսաք Ադիրեան և Տիար Խոսրով Շամլեան։

— Նոյն օրը, նոյն առիթով Ս. Աթոռ ժամանեց Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Գրիգորեան, որպէս ներկայացուցիչ Գերշ. Տ. Խադ Արքեպս. Աջապահեանի։ Իսկ յաջորդ առաւօտ, նոյն առիթով, Ս. Աթոռ ժամանեց Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Կարպիսեան։

*Արքայական Հրովարտակի առաջման յաջորդող օրերուն, հետևեալ պաշտօնական անձնաւորութիւնները շնորհաւորութեան եկան Պատրիարքարան. —*

Եշ. 11 Օգոստ.ին, Յունաց Ս. Պատրիարքը՝ Ամեն. Տ. Պենետիքթոս, իր Միաբանութեան անդամներով։

Ուր. 12 Օգոստ.ին, Երուսաղէմի Մութասարըֆ Համտի Պէյ Խալաֆ և Հին Քաղաքի Ոստիկանապետ Սաադ Պէյ Նազիֆ։

Շբ. 13 Օգոստ.ին, Երուսաղէմի և Ս. Տեղեաց Կառավարիչ Ն. Վսեմ. Հասան էլ Քաթիպ, ընկերակցութեամբ Ընդհ. Ոստիկանապետ Իպրահիմ Պէյ Քրէյշանի և Հին Քաղաքի Ոստիկանապետ Սաադ Պէյ Նազիֆի։

Կիր. 14 Օգոստ.ին, Ֆրանչիսկեանց Կիւսթոտի փոխանորդը, իր Միաբանակից անդամներով։

Գշ. 23 Օգոստ.ին, Քաղաքիս Պապական Նուիրակը՝ Մոնս. Ժոզէֆ Սէնոփ։

## ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

13 Օգոստոս, Շաբաթ երեկոյեան ժամերգութենէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Սարկաւագական կոչման արարողութիւնը Ս. Աթոռոյս Ժառանգ. Վարժարանի բարձրագոյն կարգի 5 սաներուն, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

Յաջորդ օրը, ի ժամ Ս. Պատարագի, հինգն ալ ձեռնադրուեցան Աւագ Սարկաւագ, Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէն։ Խարտուիլակն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան։ Սրտագրաւ էր պահը երբ հինգն ալ ծնրադիր, կարմիր բազկուրաններ իրենց թևերուն, ժողովուրդին կը դառնային ձեռնամբարձ։ Նորընծաները անմիջապէս սկսան սպասարկել Ս. Խորհուրդին։

*Ստորև կուտանք իրենց ամփոփ կենսագրականները. —*

**Յարութիւն Սրկ. Իգնատիոսեան** ծնած է Պէյրութ, 1939ին։ Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Աբգարեան Ազգ. Վարժարանին մէջ, որուն վեցամեայ ընթացքը աւարտելէ ետք մտած է Անթիլիասի Դպրեվանքը որպէս ժառանգաւոր սան։ 1958ին, աւարտելէ ետք Դպրեվանքին երեք դասարանները, կուգայ Երուսաղէմ և կ'աշակերտէ Ս. Աթոռոյս Ժառանգ. Վարժարանին։

**Յակոբ Սրկ. Պոռուէրեան** ծնած է Հալէպ, 1912ին։ Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Հայկազեան և Կիւլպէնկեան ազգային վարժարաններուն մէջ։ 1955ին ընդունուած է Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանը։

**Արամ Սրկ. Գազանճեան** ծնած է Պէյրութ, 1942ին։ Նախակրթութիւնը առած է տեղւոյն Նուպարեան և Թէքէեան ազգային վարժարաններուն մէջ։ 1955ին եկած է Երուսաղէմ և ընդունուած Ս. Աթոռոյս Ժառանգ. Վարժարանը։ Աւարտելէ ետք Վարժարանի Գ. դասարանը, կը մեկնի Կիպրոս, ու կը հետևի Մելգոնեան Կրթ. Հաստատութեան Թ. դասարանի դասընթացքներուն։ 1960 Յունիսին կը վերադառնայ Ս. Աթոռ։

**Պետրոս Սրկ. Աղայեան** ծնած է Հալէպ, 1940ին։ Նախնական կրթութիւնը ստացած է անդ՝ Գերմանիկ և ապա Սահակեան ազգ. վարժարաններուն մէջ, և այս վերջինոյն ընթացքը աւարտելէ ետք, 1956ին, կուգայ Երուսաղէմ և կ'աշակերտէ Ս. Աթոռոյս Ժառանգ. Վարժարանին։

**Կայծակ Սրկ. Մախսեսեան** ծնած է Դամասկոս, 1942ին։ Փոքր տարիքին, ծնողքին հետ փոխադրուած է Պէյրութ, ուր Աբգարեան Ազգային Վարժարանի իննամեայ ընթացքը աւարտելէ ետք յաճախած է Յովակիմեան-Մանուկեան Երկր. Վարժարանը։ 1957ին Երուսաղէմ գալով, աշակերտած է Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանին։

*Հինգն ալ յառաջիկայ դպրոցական տարեշրջանին պիտի հետևին Ս. Աթոռոյս Ընծայարանի դասընթացքներուն։*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութեամբ ստացանք Ֆրէզնոյէն, Տիար Գրիգոր Սարաճեանէ, ձեռագիր Քարոզագիրք մը, Զմիւռնացի Գէորգ Արքեպիսկոպոսի, օրինակուած 1863ին, ձեռամբ եւ ի վայելումն Տիգրանակերցի Բարդուղիմեան Կարապետ Վարդապետի, եւ յետ ժամանակի դարձած սեփականութիւն Այնթապցի Տ. Մովսէս Աւագ Քահանայ Ժամկոչեանի:

Տեսուչ Ձեռագրատան Ս. Աթոռոյ

ՆՈՐԱՅՐ ԵՊՍ.

digitised by A.R.A.R.@